ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

21 դեկտեմբերի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

183
(2849)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿԱԼԱՆՔԸ ԵՐԿԱՐԵՑՐԵԼ ԵՆ

Արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանին ծեծի ենթարկելու գործով կալանավորված Արա Բադոյանի կալանքի ժամկետը երկարաձգվել է 3 ամսով: Նա կալանքի տակ կմնա մինչեւ 2024թ. մարտի 2-ը, եթե նոր որոշում չկայացվի:

Հիշեցնենք, որ այս տարվա հունվարի 17-ին Ազգային անվտանգության ծառայությունը հայտնել էր, որ Ա.Բ-ն, 2020 պատերազմի դադարեցման գործընթացով պայմանավորված, մի խումբ քաղաքացիների հետ հավաքվել են մայրաքաղաք Երեւանում գտնվող ՀՀ կառավարության, Ազգային ժողովի վարչական շենքերի դիմաց, դրանց ներսում եւ ՀՀ վարչապետին հատկացված կեցավայրի մոտ կատարվել են զանգվածային անկարգություններ:

Նույն հաղորդագրության համաձայն՝ միացել է ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի նկատմամբ բռնություն գործադրող՝ զանգվածային անկարգությունների մասնակիցներին, ճեղքելով վերջիններիս շարքերը՝ մոտեցել է արդեն իսկ գետնին ընկած Արարատ Միրզոյանին եւ ոտքով հարվածել է վերջինիս՝ այդկերպ բռնություն գործադրելով նրա նկատմամբ:

Ա.Բ-ի եւ զանգվածային անկարգությունների մյուս մասնակիցների կողմից գործադրված բռնության հետեւանքով Արարատ Միրզոյանին պատճառվել են բազմաթիվ մարմնական վնասվածքներ, վերջինս կորցրել է գիտակցությունը, վնասվել է նրա աչքը, եւ նա տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն: Արդյունքում Ա.Բ-ն կալանավորվել է:

Ազգային անվտանգության ծառայությունը չէր գաղտնազերծել, թե ով է Ա. Բ-ն, որը հավածել է Արարատ Միրոզյանին: «Ժողովուրդ» օրաթերթն իր աղբյուրներից պարզեց, որ վերջինս Արա Բադոյանն է: ԱԱԾ քննչական դեպարտամենտը ներկայացված միջնորդությամբ նշել էր, թե, իբր, Արա Բադոյանը ոտքով մեկ անգամ հարվածել է ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանին՝ որպես այդ փաստի միակ եւ վճռորոշ ապացույց հղում անելով լրատվական կայքի յութուբյան տեսագրությանը:

Անհասկանալի է՝ որ տեսագրությունն է Ազգային անվտանգության ծառայության ձեռքում հայտնվել, եթե մինչ այս եղած, ստուգված բոլոր տեսանյութերում չի երեւում Ա. Բադոյանի կողմից Արարատ Միրզոյանին հարվածելու, նրա նկատմամբ բռնություն գործադրելու հանգամանքը, ավելին՝ տեսագրության մեջ տեսանելի է ամբոխային իրավիճակ, խառնաշփոթ, բազում մարդիկ, այդ թվում՝ Արա Բադոյանը: Նկատենք, որ տեսագրության մեջ առհասարակ տեսանելի չէ Արարատ Միրզոյանը:

Տեսագրության մեջ տեսանելի չեն նաեւ Արա Բադոյանի ոտքերը: Քննչական դեպարտամենտը, ոչնչով չպայմանավորված առաջնորդնելով, զուտ ենթադրությամբ արձանագրել է. «(...) ըստ ընդհանրական շարժի՝ ոտքը երկու անգամ շարժում է դեպի այն հատվածը, որտեղ գտվում է Արարատ Միրզոյանը, ինչից հետո (...) հեռանում է (...)»: Մեկ կարեւոր որոշմամբ էլ նշվել է. «(...) ոտքով մեկ անգամ հարվածել է Արարատ Միրզոյանին»:Այսպիսով ակնհայտ է, որ Արա Բադոյանի կողմից Արարատ Միրզոյանին հարվածելու վերաբերյալ որեւէ պատշաճ ապացույց առկա չէ, սակայն վերջինս շուրջ մեկ ամիս մնաց կալանքի տակ: Այնուհետեւ վերջինս մի քանի ամիս առաջ ազատ էր արձակվել, սակայն ՀՀ վերաքննիչ դատարանը կրկին 3 ամսով կալանավորման որոշում է կայացրել:

Նիկոլ Փաշինյանը երկար ընդմիջումից հետո վերադարձել է կառավարություն՝ իր նստավայր: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ այս տարվա մայիսից Նիկոլ Փաշինյանը տեղափոխվել էր Բաղրամյան 26՝ նախագահական նստավայր, քանի որ կառավարության իր աշխատասենյակում վերանորոգումներ էին ընթանում: Թեեւ ավելի վաղ մեզ կառավարությունից հայտնել էին, որ վերանորոգման աշխատանքները պետք է դեռ սեպտեմբերին ավարտած լինեին, բայց վերանորոգման աշխատանքները, փաստորեն, երկար են տեւել՝ հասնելով մինչեւ դեկտեմբեր: Սա իր հերթին անհարմարություն էր պատճառել նախագահ Վահագն Խաչատուրյանին, որը թեեւ օրնիբուն աշխատելու իր ձգտումով աչքի չի ընկնում, բայց դժգոհել էր, որ Նիկոլ Փաշինյանը տեղափոխվել է իր նստավայր, ու ինքը ստիպված է եղել ժամանակավոր լքել աշխատավայրը: «Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ կառավարությունից տեղեկացավ, որ Նիկոլ Փաշինյանն արդեն վերադարձել է կառավարություն՝ իր նստավայր, ու իր գործառույթներն այնտեղից է իրականացնում:



ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած թարմ տվյալների համաձայն՝ Արագածոտնի մարզում գրանցվել է ամուսնությունների ամենաբարձր շեմը. այն 1 000 բնակչի հաշվով կազմել է գրեթե 6.6%: Հաջորդ տեղում 6.5%-ով Վայոց ձորի մարզն է, 3-րդ տեղում Կոտայքի մարզն է՝ 6.2%: «Ժողովուրդ» օրաթերթը նույն աղբյուրից տեղեկացավ, որ ամենաշատ ամուսնալուծությունները դիտվել են Երեւանում՝ 1 000 մարդու հաշվով 2.1%: Քաղաք Երեւանին հաջորդում են Լոռու եւ Սյունիքի մարզերը: Հավելենք նաեւ՝ 2022 թվականին կանանց առաջին ամուսնության միջին տարիքը կազմել է 27.9, իսկ տղամարդկանցը՝ 31.4 տարի: Այն զգալիորեն ավել է, քան 2002 թվականին, երբ կանանց ամուսնության միջին տարիքը 23.2 տարին է, իսկ 2012 թվականին համապատասխանաբար 25.3 եւ 28.8 տարին: Կանանց ինչպես առաջին ամուսնության միջին տարիքը, այնպես էլ ամուսնության միջին տարիքն, ընդհանուր առմամբ, ավելի բարձր է, քան մոր միջին տարիքը թե՛ առաջին երեխայի ծնունդյան, թե՛ ընդհանուր ծնունդյան ժամանակ: Երեւույթը պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալները հաշվարկված են՝ գրանցված ամուսնությունների հիման վրա, իսկ սովորաբար ամուսնությունների գրանցումներն իրականացվում են որոշակի հետաձգումով՝ երեխայի ծնունդից հետո, ինչպես նաեւ առկա են դեպքեր 2-րդ եւ այլ ամուսնությունների, որոնց գրանցումը կատարվում է ավելի բարձր տարիքում: Ընդգծենք եւս մի փաստ. 2020 թվականից հետո քաղաքային բնակչության շրջանում կտրուկ նվազել է պտղաբերության գործակիցը, իսկ գյուղերում՝ ավելացել: Այս տվյալները եւս հավաքագրված են օրենքով հաստատված փաստաթղթային գրանցման դեպքում:

Հայաստանի Հանրապետությունը հարուստ է ջրային պաշարներով եւ ունի տարածաշրջանում քաղցրահամ ջրի ամենամեծ պաշարները, այդուհանդերձ, անհրաժեշտ է ջուրն օգտագործել խելամիտ: Արցախը թշնամուն «նվիրելուց» հետո Հայաստանը կորցրեց նաեւ Մեծ եւ Փոքր Ալ լճերը, որոնք համարվում էին Հայաստանի բնական ջրային ամենամեծ աղբյուրները: Ստացվում է, որ Հայաստանը զրկվեց խոշոր եւ առատ ջրային աղբյուրներից: Կորցնելով ջրային աղբյուրներից խոշորագույնը՝ Հայաստանում 2022 թվականին ջրառը աղբյուրներից կազմել է 3 մլն 71 հազար խորանարդ մետր: 2018 թվականին ջրառը աղբյուրներից կազմել է 2 մլն 714 հազար մետր խորանարդ, որը եթե համեմատենք 2022 թվականի հետ, ապա կտեսնենք, որ Հայաստանում աղբյուրներից ջրառը ավելացել է գրեթե 1 մլն խորանարդ մետրով: Այսինքն՝ ոռոգման կամ այլ նպատակների համար օգտագործվող ջրի քանակը ավելացել է, բայց նվազել է ՀՀ ջրային ֆոնդն ապահովող աղբյուրների մի մասը: Դա է պատճառը, որ ձուկ արտադրողներին ստիպում են փակել ձկնաբուծարանները:

ԱՐՑԱԽ

«ԴԵ ԹՈՂ ՀԻՄԱ ԷԼ ՊԱՐԻ». Է. ՇԱՐՄԱԶԱՆՈՎ

ArmLur.am-ի զրուցակիցը Հայաստանի հանրապետական կուսակցության խոսնակ Էդուարդ Շարմազանովն է:

-Պարոն Շարմազանով, երեկ Նիկոլ Փաշինյանը ծավալուն հարցազրույց տվեց եւ հիմնականում խոսում էր Արցախի եւ բանակցային գործընթացի մասին: Հետեւե՞լ եք նրա ելույթին, ի՞նչ դիտարկումներ կանեք հայտարարությունների վերաբերյալ:

-Երբ Նիկոլ Փաշինյանը խոսում է Արցախի մասին, դա նույնն է, ոնց որ մարդասպանը խոսի իր զոհից, կամ հիվանդին սպանող բժիշկը հայտարարի, որ ինքը կապ չունի դրա հետ: Նիկոլ Փաշինյանն է Արցախի հանձնման, Արցախի հայաթափման հեղինակը: Ինքն ունի մեկ առաքելություն՝ ուզում է, ինչպես Հրանտ Մաթեւոսյանն էր ասում, մարդկանցից սարքել անասուն՝ առանց հիշողության, որպեսզի իր վրայից մաքրի կապիտուլյանտի ու ազգակործան պատուհասի պիտակը, բայց չի ստացվելու:

-Իր հարցազրույցի ժամանակ Նիկոլ Փաշինյանը մի հայտարարություն արեց՝ կրկին մեղավորության սլաքներն ուղղելով նախկին իշխանությունների կողմը, ասելով՝ «ԼՂ հայաթափումը պլանավորած մարդիկ համարում են, որ դրանով լուծվեց ԼՂ հարցը ու պետք է լուծվի նաեւ Հայաստանի հարցը»: Ինչպե՞ս կարծագանքեք:

-Նիկոլ Փաշինյանի մտքի գոհարները մեկնաբանելը մազոխիզմ է իմ հանդեպ, սադիզմ՝ Ձեր հանդեպ: 2028թ.-ին, երբ նա եկավ իշխանության, հայտարարում էր, թե բանակցությունները սկսում է իր սեփական կետից: Իշխանության գալուց մի քանի օր հետո Նիկոլ Փաշինյանը գնաց Արցախ ու հայտարարեց՝ ինքնորոշման իրավունքը պարտադիր է, ասում էր՝ ինչ պետք է, այն էլ կբանակցեմ, բանակցությունները զրոյական կետից եմ սկսում, ես կհասնեմ մի լուծման, որը կբավարարի Հայաստանի ու Արցախի ժողովուրդներին: Ես հիմա նրան հարց եմ տալիս՝ եթե Արցախը հանձնված էր նախկիններին օրոք, ինչպե՞ս էիր շաբաթը մեկ գնում Արցախ, կամ երբ ասում է՝ Արցախը տրված էր, իր որդին Ադրբեջանի տարածքու՞մ է ծառայել, ինքն Ադրբեջանի տարածքո՞ւմ էր կանգնում ու ասում՝ Արցախը Հայաստան է ու վերջ, Քոչարի որտե՞ղ էր պարում, դե թող հիմա էլ պարի: 2020թ.-ի հոկտեմբերին, երբ ինքն էլի փորձեց մեղքը նախկինների վրա գցի, ես իրեն ասացի՝ նախկինները քեզ ժառանգել են երկու հայկական պետություն, դու մտածի՝ ինչ ես քեզանից հետո թողնելու: Այնպիսի տպավորություն է, որ Սերժ Սարգսյանի հեռանալուց ու Փաշինյանի իշխանության գալուց երկու օր հետո պատերազմ է սկսել, Փաշինյանի՝ վարչապետ դառնալու եւ պատերազմը սկսելու միջեւ 2.5 տարի է եղել, նա այդ ընթացքում հետեւողականորեն մոտեցրել է պատերազմը եւ կապիտուլացիան: Նա փոխարենը մեր անվտանգային համակարգն ուժեղացներ, պատերազմ էր հայտարարել նախկիններին:

-Պարոն Շարմազանով, կխնդրեմ նաեւ մեկնաբանեք հետեւյալ հայտարարությունը. «2016թ.-ին ի հայտ եկավ մի նոր փաստաթուղթ, ըստ որի՝ այն կարգավիճակը, որ ունի ԼՂ-ն, զրոյացվելու է»: Ի՞նչ փաստաթղթի մասին էր նա խոսում:

-Սուտ է դա. 2021թ.-ի հունվարին ԵԱՀԿ ՄԽ ռուսաստանցի համանախագահ Պոպովը հրապարակային ՌԴ ԱԳՆ կայքէջում պատասխանել է Նիկոլ Փաշինյանի ստերին ու հայտարարել է, թե ինչ են միջնորդ երկրներն առաջարկել Հայաստանին ու Ադրբեջանին. առաջարկել են 5 շրջանները տալ Ադրբեջանին ու դրա փոխարեն ստանալ միջանկյալ կարգավիճակ, ըստ որի՝ ողջ ԼՂ ինքնավար մարզի եւ Լաչինի ու Քելբաջարի տարածքների վերահսկողությունը Հայաստանն է իրականացնելու: Նիկոլ Փաշինյանի կեղծ թեզերին ես հակադրեմ իր սիրելի գործընկեր Ալիեւի հայտարարությունները: Նա 2016թ.-ին հայտարարում էր, որ միջազգային հանրությունն իրեն ստիպում է ճանաչել Արցախի անկախությունը. այսքանից հետո ի՞նչ է խոսում: Եթե փաստեր ունի, նման փաստաթուղթ կա, թող հրապարակի: Եթե Արցախի կարգավիճակը զրոյացված էր, ո՞նց էր Ալիեւը հայտարարում, որ իր վրա ճնշում կար, ո՞նց էր 2019թ.-ին Փաշինյանը հայտարարում, որ Արցախն Ադրբեջան է ու վերջ: Նիկոլ Փաշինյանն ինքն իր ստերի մեջ խճճվել է: Պատերազմի ժամանակ ես իրեն հարց եմ տվել՝ ինչ է դրված սեղանին պատերազմը կանգնեցնելու համար, ասել է՝ 5, 2. դրա մեջ ո՛չ Շուշին էր մտնում, ո՛չ Հադրութը: Ես իրեն այսքան փաստ եմ ներկայացնում. եթե փաստ ունի, սուտ չի խոսում, թող ինքն էլ իր փաստերը հրապարակի:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԲԱՑԱՀԱՅՏ ԿԵՂԾԻՔ

Բրյուսելը երբեք շահագրգռված չի եղել Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների կարգավորմամբ:

«Արեւմուտքի հիմնական նպատակն ու խնդիրը կապ չունի Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման հետ, այլ հակառուսական դիրքորոշման փորձ է: Սա ոչ մի կապ չունի տարածաշրջանում երկարաժամկետ ճգնաժամի լուծման հետ: Ամենայն հավանականությամբ, դա ցանկություն է նոր հակառուսական դիրք գրավելու, դրանում մեր երկրին մոտ ոտք դնելու եւ Ռուսաստանի Դաշնության մասնակցությամբ ձեռք բերված ամեն դրական, կառուցողական եւ արդյունավետ ամեն ինչի իրականացումը կանխելու համար:

Եվ այդ փորձերում ԵՄ-ն գնում է հնարավոր ամեն ինչի, այդ թվում՝ բացահայտ կեղծիքի: Վստահ եմ, որ սա ոչ թե պատահականություն է, ոչ թե տառասխալ է, այլ ուղղակի կեղծիք: Կցանկանայի, որ սա դաս դառնա բոլորի համար, թե ինչպես պետք է զգոն լինել ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի հետ հարաբերություններում:

ԵՄ մարդու իրավունքների պատժամիջոցներին աջակցող երկրների ցանկից Հայաստանի եւ Ադրբեջանի հայտնվելու, ապա անհետացման պատմությունը հենց վառ օրինակ է Բրյուսելի քաղաքականության մեջ նեոգաղութատիրական մտածողության: Սա նաեւ վառ օրինակ է նրա, թե ինչ է արեւմտյան հանրությունը (ԱՄՆ գլխավորությամբ) ուղղակիորեն ցանկանում նրանցից, ես չէի ասի նույնիսկ այս երկրներից, այլ երկրների միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացում ներգրավվելուց»,- ասել է Զախարովան:

ԱԿՆԿԱԼՈՒՄ ԵՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսական կողմն ակնկալում է, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկա կգտնվի Սանկտ Պետերբուրգում ԱՊՀ երկրների ղեկավարների ոչ պաշտոնական գագաթնաժողովին, իսկ Երեւանի հետ առկա հարցերը Մոսկվան պատրաստ է լուծել պրոֆեսիոնալ ձեւով. այս մասին ճեպազրույցում հայտարարել է ՌԴ արտգործնախարարության պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան: «Մենք հիմնվում ենք այն բանի վրա, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կօգտվի Ռուսաստանի Դաշնության նախագահի հրավերից եւ դեկտեմբերի 25-26-ը կժամանի Սանկտ Պետերբուրգ, որտեղ կմասնակցի Եվրասիական տնտեսական միության բարձրագույն խորհրդի նիստին եւ ԱՊՀ անդամ պետությունների ղեկավարների նախաամանորյա ավանդական հանդիպմանը: Այնտեղ, ըստ էության, հնարավոր կլինի բարձրացնել բոլոր հետաքրքրող հարցերը», - նշել է պաշտոնական:

Ինչ վերաբերում է հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ Ռուսաստանի դիրքորոշմանը, ապա, Զախարովայի խոսքով, դրա մասին բազմիցս եւ հանգամանորեն հայտարարել են ինչպես ՌԴ նախագահը, արտգործնախարարը, այնպես էլ ՌԴ նախագահի վարչակազմը եւ արտգործնախարարությունը:

ԼՂ ՀԱՐՑ

«ՄԻԱՅՆ ՍՐԻԿԱՆԵՐՆ ԵՆ ԱՍՈՒՄ՝ ԱՅԼ ԵԼՔ ՉԿԱՐ». Պ. ՀԱՅՐԻԿՅԱՆ

«Այո՛, 1990-1991-ին կային այդպիսի մարդիկ, որոնց ոչ միայն ճանաչել եմ, այլեւ ուղղություն եմ տվել. նրանք բթամիտներն էին, այն ժամանակվա նիկոլները»,- «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նշեց ԱԻՄ նախագահ Պարույր Հայրիկյանը՝ անդրադառնալով Նիկոլ Փաշինյանի հայտարարությանը, որ 1990-1991 թվականներին առաջնորդներն ասում էին, որ մեզ ոչ թե անկախություն է պետք, որ պետություն ունենանք, այլ անկախ պետություն է պետք՝ ԼՂ հարցը լուծելու համար:

«Նրանց համար կար Մոսկվայի կողմից պարտադրած Արցախի հարցը: Ժամանակին Մոսկվան Ստալինի միջոցով ստեղծել է Արցախի խնդիրը, որպեսզի եթե ադրբեջանցիները կամենան անկախանալ, նրանց սանձի, եթե հայերը փորձեն անկախանալ, նրանց սանձի: Այսինքն՝ պատանդ է վերցրել:

Հիմա բթամիտ Նիկոլին թվում է, թե այն ժամանակ բոլորն իր նման են մտածել: Այո՛, ես բթամիտ արցախապաշտներին, արցախակենտրոն մտածողներին բացատրում էի, որ Արցախին կարող է օգնել միայն անկախ Հայաստանը: Հիմա նա կարդացել է իմ ասածները, վերցրել է մի մասը»,-ասաց Հայրիկյանը:

Նա հայտարարեց, որ Նիկոլ Փաշինյանն ընդհանրապես Արցախի մասին խոսելու իրավունք չունի:

«Դուք գիտե՞ք, Նիկոլի գլխավոր բթամտությունը որտեղից է երեւում. երբ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ սահմանադրական փոփոխությունների հայցեակարգ պետք է մշակեն: Սահմանադրական բարեփոխումներն անում ես այն դեպքում, երբ ունես հայեցակարգ»,-ասաց նա:

Անդրադառնալով Փաշինյանի հայտարարությանը, թե միջազգային հանրությունը դեռ 1990-ականներից Արցախը դիտարկել է Ադրբեջանի կազմում, Հայրիկյանն ասաց. «Բթամիտ պետք չի լինել, պարզապես շատ բարձր մակարդակի սրիկա պետք է լինել ասելու համար, որ Արցախի հարցը լուծված էր: Արցախի խնդրին լուծում գտնելու համար ամբողջ միջազգային հանրություն էր աշխատում: Եթե աշխարհը դեմ լիներ, Մինսկի խմբով կհավաքվեին, կասեին՝ Նիկոլ կամ Լեւոն կամ Ռոբերտ, էդ հարցը փակե՛ք, վերջացավ, դուք սխալ եք: Աշխարհն ասում է՝ անառարկելի ինքնորոշման հարց կա, որը հակադրվում է գոյություն չունեցող տարածքային ամբողջականության սկզբունքին: Միայն սրիկաներն են ասում, որ միջազգային հանրությունն ունի տարածքային ամբողջականության սկզբունք: Դա սկզբունք չի, պայմանավորվածություն է, իսկ ինքնորոշումը սկզբունք է:

Դու ո՞վ ես, որ ասես՝ ամեն հարց լուծված էր: Միայն սրիկաներն են ասում՝ այլ ելք չկար: Առողջ, բանական մարդն ասում է՝ ես ելքը չեմ գտնում, դրա համար ով ելքը գիտի, թող անի»:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԳԻՏՈՒԹՅԱՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐ

ՀՀԿ խոսնակ Էդուարդ Շարմազանովը սոցցանցի իր էջում գրում է. «Փաստ է, որ 2020-ի նոյեմբերի 9-ի պայմանավորվածությունները նաեւ Հայաստանի կառավարիչների պատճառով չեն կատարվել:

Նիկոլը խախտե՞լ է 2020-ի նոյեմբերի 9-ի հայտարարության կետերը, թե՞ ոչ:

Նոյեմբերի 9-ի հայտարարության 1-ին կետի համաձայն՝ «կողմերը կանգ են առնում իրենց զբաղեցրած դիրքերում»:

2020-ի դեկտեմբերին Փաշինյանի ռեժիմը խախտեց այս կետն ու մեր զորքերին մի քանի տասնյակ կմ նահանջի հրաման տվեց՝ Ղուբաթլուի շրջանից դեպի Սյունիք՝ դիրքային առավելություն տալով հակառակորդին:

Հայտարարության 6-րդ կետի համաձայն՝ «Կողմերի միջեւ համաձայնեցմամբ՝ առաջիկա երեք տարիների ընթացքում սահմանվելու է Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ կապն ապահովող Լաչինի միջանցքով նոր երթուղու կառուցման պլանը»:

Ուշադրություն. միայն 3 տարվա ընթացքում պետք է համաձայնեցվեր Լաչինի միջանցքով նոր երթուղու կառուցման նախագիծը:

Իսկ ի՞նչ արեց Փաշինյանը:

2021-ի օգոստոսի վերջին ամբողջ Լաչինի շրջանն առանց մեկ կրակոցի զիջեց ադրբեջանցիներին՝ հայաթափելով Լաչինի շրջանը:

Սա նոյեմբերի 9-ի հայտարարության բացահայտ խախտում էր Փաշինյան-Ալիեւ զույգի կողմից:

Հայտարարության 8-րդ կետի համաձայն՝ «իրականացվում է ռազմագերիների, պատանդների եւ այլ պահվող անձանց, ինչպես նաեւ զոհվածների մարմինների փոխանակում»:

Հարց Փաշինյանին. քանի՞ ռազմագերի մենք ունենք Բաքվում:

Պատասխան. առնվազն մի քանի տասնյակ:

Այդ դեպքում ինչու՞ ես շարունակել հանդիպումներն Ալիեւի հետ, եթե նա չի կատարել 8-րդ կետի պայմանները...

...Ինչու՞ է Փաշինյանը խախտել այդ կետերը եւ 2022-ի հոկտեմբերի 6-ին Պրահայում Արցախը ճանաչել Ադրբեջանի կազմում:

Ինչու՞... Շրջանառվում են մի քանի վարկածներ:

1. Ալիեւի եւ Լուկաշենկոյի բարձրաձայնած 5 մլրդը տեղ է հասել երեւի:

2. Հնարավոր է՝ Փաշինյանի մասնակցությամբ կամ իմացությամբ իրականացվել է 2018-ի իշխանափոխության արտաքին դերակատարների՝ Արցախը հանձնելու ու «պատմական կաղապարներից հրաժարվելու» ծրագիրը:

3. Չի բացառվում պատմության մեջ որպես «աննախադեպ» մնալու Փաշինյանի «առաքելությունը», թեկուզ «աննախադեպ կապիտուլյանտ» կամ «աննախադեպ ազգակործան պատուհաս» պիտակով:

4. Տեսանելի են քաղաքական տգիտության եւ ավանտյուրիզմի միաձուլման էլեմենտներ:

5. Կա կարծիք, որ սա Արցախից եւ արցախցիներից «մուռ հանելու» բութ ձգտում էր:

Վարկածները բազմաթիվ են ու չկա վարկածների մեջ գեթ մեկը, որը կարդարացներ Փաշինյանի կողմից բերած աղետները...»:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ «ՏԻՏՂՈՍԱՅԻՆ» ՏԱՐԱԾՔԸ՝ 29.800 ՔՄ

Ադրբեջանի հետ առաջիկա բանակցությունների ընթացքում Հայաստանը փորձելու է պարզաբանումներ ստանալ, թե արդյոք Ադրբեջանը համաձայն է խաղաղության պայմանագիր կնքել Եվրոպական Միության միջնորդությամբ համաձայնեցված երեք սկզբունքների հիման վրա:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս մասին ասել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ պատասխանելով քաղաքացիներից մեկի հարցին:

Նա նշել է, որ այս պահի դրությամբ դեռ պարզ չէ, թե, ի վերջո, Ադրբեջանը համաձայն է արդյոք, վերահաստատում է արդյոք երեք սկզբունքների շուրջ խաղաղության պայմանագիր կնքել Հայաստանի Հանրապետության հետ:

«Այդ երեք սկզբունքները համաձայնեցվել են մայիսի 14-ին ու հուլիսի 15-ին Եվրամիության խորհրդի նախագահի, Ադրբեջանի նախագահի եւ իմ եռակողմ հանդիպումների արդյունքներով: Այդ սկզբունքներից առաջինը հետեւյալն է՝ Հայաստանը եւ Ադրբեջանը ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունն՝ այն ըմբռնմամբ, որ Հայաստանի տարածքը 29 հազար 800 քառակուսի կիլոմետր է, Ադրբեջանի տարածքը՝ 86 հազար 600 քառակուսի կմ: Երկրորդ սկզբունքը հետեւյալն է՝ որ դելիմիտացիայի գործընթացի քաղաքական հենքը Ալմաթայի հռչակագիրն է: Իմիջայլոց, հենց Ալմաթայի հռչակագիրն է հիմնավորումը, թե ինչու ենք մենք ասում, որ Հայաստանի, այսպես ասած, տիտղոսային տարածքը 29 հազար 800 քառակուսի կմ է, որովհետեւ Հայաստանի Հանրապետությունը ձեւավորվել է Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության անկախանալու միջոցով: Այսինքն՝ ՀԽՍՀ տարածքով ձեւավորվել է Հայաստանի Հանրապետությունը: Ալմաթայի հռչակագրով այն ստորագրած 12 հանրապետությունները՝ ներառյալ Հայաստանը եւ Ադրբեջանական Հանրապետությունը, արձանագրել են, որ այդ հենքի վրա ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը, սահմանների անխախտելիությունը եւ սուվերենությունը»,- մանրամասնել է վարչապետը՝ հավելելով, որ այս սկզբունքի հետագա զարգացման ընթացքում ձեռք է բերվել ըմբռնում, որ ՀՀ-ի եւ Ադրբեջանի սահմանների դելիմիտացիայի համար պետք է օգտագործվեն 1974-ից 1990 թվականների Խորհրդային Միության ԶՈՒ գլխավոր շտաբի քարտեզները:

Երրորդ սկզբունքը երկրների իրավազորության, սուվերենության հարգմամբ, փոխադարձության եւ հավասարության սկզբունքի հիման վրա՝ տարածաշրջանային կոմունիկացիաների բացումն է:

«Հիմա, եթե վերլուծենք հայտարարությունները, հստակ չէ, չենք կարող վստահաբար պնդել, որ Ադրբեջանը հրաժարվում է այդ երեք սկզբունքների հիման վրա խաղաղության պայմանագիր կնքել, բայց նաեւ չենք կարող վստահ ասել, որ Ադրբեջանը վերահաստատում է իր հավատարմությունը այդ երեք սկզբունքներին: Անհրաժեշտություն կա բանակցությունների ընթացքում այս հարցերը եւ նրբությունները պարզաբանել»,-ասել է վարչապետը:

«Ինչպես գիտեք, գոնե քարտեզների եւ սահմանների մասով քննարկում նախատեսված է սահմանագծման հանձնաժողովների ֆորմատով: Ինչպես սահմանագծման հարցերով նախատեսվող քննարկումներից, այնպես էլ, եթե էլի բանակցություններ լինեն, հետեւություններ կարվեն, թե արդյոք Ադրբեջանը պատրաստ է այդ սկզբունքների հիման վրա գնալ խաղաղության, թե հրաժարվում է դրանցից»,- նշել է Փաշինյանը:

Նրա դիտարկմամբ՝ չնայած Ադրբեջանը հայտարարել է, որ ճանաչում է Հայաստանի տարածքային ամբողջականությունը, բայց կոնկրետություններ են պետք, թե ինչ նկատի ունեն՝ ՀՀ տարածքային ամբողջականություն ասելով: «Այս հարցերի պարզաբանումն առաջիկա բանակցային գործընթացների հիմնական խնդիրն է, որը մենք պետք է փորձենք լուծել»,- եզրափակել է Նիկոլ Փաշինյանը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ

Ռուսական կողմն ակնկալում է, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկա կգտնվի Սանկտ Պետերբուրգում ԱՊՀ երկրների ղեկավարների ոչ պաշտոնական գագաթնաժողովին, իսկ Երեւանի հետ առկա հարցերը Մոսկվան պատրաստ է լուծել պրոֆեսիոնալ ձեւով: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին ճեպազրույցում հայտարարել է ՌԴ արտգործնախարարության պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

«Մենք հիմնվում ենք այն բանի վրա, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կօգտվի Ռուսաստանի Դաշնության նախագահի հրավերից եւ դեկտեմբերի 25-26-ը կժամանի Սանկտ Պետերբուրգ, որտեղ կմասնակցի Եվրասիական տնտեսական միության բարձրագույն խորհրդի նիստին եւ ԱՊՀ անդամ պետությունների ղեկավարների նախաամանորյա ավանդական հանդիպմանը: Այնտեղ, ըստ էության, հնարավոր կլինի բարձրացնել բոլոր հետաքրքրող հարցերը», - նշել է պաշտոնյան:

Ինչ վերաբերում է հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ Ռուսաստանի դիրքորոշմանը, ապա, Զախարովայի խոսքով, դրա մասին բազմիցս եւ հանգամանորեն հայտարարել են ինչպես ՌԴ նախագահը, արտգործնախարարը, այնպես էլ ՌԴ նախագահի վարչակազմը եւ արտգործնախարարությունը:

«Առաջնորդվելով Հայաստանի հետ հարաբերությունների դաշնակցային բնույթով՝ Մոսկվայում մշտապես պատրաստ են լուծել բոլոր ի հայտ եկող թեմաները հանգիստ, պրոֆեսիոնալ եւ գործընկերային ձեւով», - ասել է Զախարովան:

ԱՀԱՋԱՆԳԵՐԸ ԿԵՂԾ ԷԻՆ

Փարիզից ոչ հեռու գտնվող Վերսալի պալատից բոլոր մարդիկ տարհանվել են պայթյունի վտանգի պատճառով: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հայտնել է պալատի վարչակազմը:

«Դեկտեմբերի 12-ին՝ առավոտյան ժամը 10:20-ին, անվտանգության նկատառումներից ելնելով՝ Վերսալի պալատը տարհանում է այցելուներին եւ կվերաբացվի, հենց ավարտվեն ստուգումները», - նշված է X սոցիալական հարթակում պալատի էջում:

Պատմական այս շենքում ռումբի տեղադրման մասին ահազանգ նախկինում նույնպես ստացվել է: Հոկտեմբերին պալատի շենքից մարդկանց տարհանել էին 7 անգամ. ռումբի տեղադրման մասին ահազանգերը կեղծ էին եղել:

ԱԿՏԻՎՈՐԵՆ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ

Ռուսաստանն ու Իրանն ակտիվորեն աշխատում են ռազմավարական գործընկերության համաձայնագրի շուրջ:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին ճեպազրույցի ժամանակ հայտարարել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

«Կարող եմ ասել, որ այս փաստաթղթի վրա շատ ինտենսիվ աշխատանք է տարվում: Այդ աշխատանքները գրեթե ավարտված են. կարծում եմ, որ մոտ ապագայում մենք կկարողանանք ձեզ տեղեկացնել այդ մասին»,- նշել է նա:

ԱՀԱՋԱՆԳ

ՀՐԱՀԱՆԳ Է ՏՐՎԱԾ՝ ՉԱՆԵԼ ԴԱ

Արցախում Ադրբեջանի ցեղասպանական գործողությունների հետեւանքով բռնի տեղահանված մեր հայրենակիցները ՀՀ-ում մեծաթիվ խնդիրների առջեւ են կանգնում: Վերջին շրջանում հատկապես այդ խնդիրներն ավելանում են ՀՀ քաղաքացիություն «չունենալու» ու 070 կոդով անձնագրերը փոխելու վերաբերյալ ներկա իշխանությունների կողմից ներկայացվող պահանջի առումով:

Նախօրեին էլ արցախցի մեր հայրենակիցներից մեկը հայտնել էր, որ ինքը դեռեւս 30 տարի առաջ առաջին անձնագիրը ստացել է ՀՀ-ում, այնուհետեւ՝ Արցախ տեղափոխվելուց ու անձնագրի ժամկետը լրանալուց հետո, հենց այնտեղ երկու անգամ վերաթողարկել եւ ստացել է 070 կոդով կապույտ անձնագիր:

Արցախյան վերջին իրադարձություններից հետո տեղափոխվել է ՀՀ ու կանգնել փաստի առաջ: Անձնագրայինում նրան հայտնել են, որ ինքը ՀՀ քաղաքացի է եւ իրավունք չունի օգտվելու արցախցիների համար նախատեսված կառավարության օժանդակության ծրագրերից, միեւնույն ժամանակ հայտնել են, որ պետք է 070 կոդով անձնագիրը փոխելու գործընթաց սկսի: Իրավաբան, սահմանադրագետ Գոհար Մելոյանը, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, տեղի ունեցածը գնահատեց որպես քաղաքական կամքով ու նպատակահարմարությամբ լուծվող իրավիճակ եւ հատուկ ուշադրություն հրավիրեց խնդրի վերաբերյալ արցախցիներից ստացած մի շարք ահազանգերի ուղղությամբ.

«Ըստ շրջանառվող տեղեկությունների՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության անձնագրային բաժանմունքները հրաժարվում են արցախցիների համար որեւէ գործընթաց մեկնարկել՝ պատճառաբանելով, որ հրահանգավորված են այդպես վարվել: Այսինքն՝ մարդիկ ցանկացել են վարորդական վկայական ստանալ, իրենց ուղղակի չեն տվել՝ փորձելով քաղաքակիրթ ձեւով հասկացնել, որ հրահանգ է տրված՝ չանել դա»,- ասաց իրավաբանը:

Ըստ Գոհար Մելոյանի՝ ստացվում է, որ կառավարության՝ բնագավառը կարգավորող համապատասխան որոշումը լրջագույն կոլիզիոն իրավիճակների է հանգեցնում: Քաղաքական նպատակահարմարությունից ելնելով՝ մարդկանց կամ ստիպում են փոխել անձնագրերն ու նոր անձնագրեր ստանալ, կամ փախստականի կարգավիճակ ձեռք բերել:

Այս ամենից, ըստ նրա, կարելի է եզրակացնել, որ ՀՀ ներկա կառավարության նպատակն է արցախցիներին զրկել կոնկրետ քաղաքական իրավունքներից: Սա առաջին հերթին նշանակում է զրկվել ընտրելու իրավունքից՝ հաշվի առնելով նաեւ հնարավոր արտահերթ ընտրությունների մասին տարածվող խոսակցությունները:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դեռեւս 2020 թվականին՝ Արցախյան 44-օրյա պատերազմից հետո, արցախցիները Հայաստանում իրավական առումով որեւէ խնդրի չեն բախվել: Մեր հայրենակից Արեգա Հովսեփյանի փոխանցմամբ՝ ինքն անգամ 070 կոդով անձնագրով մասնակցել է 2021 թվականի հայաստանյան համապետական ընտրություններին ու ընդունվել է պետական աշխատանքի: Իրավաբանը, անդրադառնալով այս փաստին, պարզաբանեց, որ արցախցիները նախկինում եւս օգտվել են ՀՀ քաղաքացու իրավունքներից, իսկ քաղաքական իրավունքն իրացնելու համար այստեղ ընդամենը գրանցում են ձեւակերպել:

Ճշտող հարցին, թե արդյոք հիմա նույն գործընթացը հնարավոր չէր իրականացնել, իրավապաշտպանը բացասական պատասխան տվեց՝ պարզաբանելով, որ հստակ հրահանգ կա դա չանելու:

«Եզրահանգումն այն է, որ սա քաղաքական նպատակահարմարության հարց է դարձել, որի արդյունքում հազարավոր մարդկանց իրավունքներ են ոտնահարվում»,- եզրափակեց իրավաբան, սահմանադրագետ Գոհար Մելոյանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԵՂԾԻՔ

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԻՑ ՑԱԾՐ ԳՆՈՎ

Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունում պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում ուսումնասիրվել է Աբովյան փողոցի 8 հասցեում գտնվող շենքի օտարման գործընթացը:

Գլխավոր դատախազությունից հայտնում են, որ ուսումնասիրությամբ պարզվել է՝ կառավարության 2005 թվականի հունիսի 16-ի որոշմամբ՝ Երեւան քաղաքի Աբովյան 8 հասցեում գտնվող՝ 178 մլն 464 հազար դրամ կադաստրային արժեքով, օտարման ոչ ենթակա 638.2 քմ մակերեսով տարածքը կադաստրային արժեքից շուրջ 5 անգամ ցածր գնով՝ 32 մլն 170 հազար 500 դրամով, ուղղակի վաճառքով օտարվել է «Պրոգրես Արմենիա» ՍՊ ընկերությանը (ընկերության բաժնետերերն են գործարար Ս.Մ.-ն եւ նրա կինը՝ Գ.Ք.-ն):

Գույքը ձեռք բերելուց մեկ տարի անց՝ 2006 թվականի մարտի 31-ին, Երեւանի քաղաքապետարանի ճարտարապետության եւ քաղաքաշինության վարչության պետ Ս.Դ.-ի կողմից «Պրոգրես Արմենիա» ՍՊ ընկերության տնօրեն Ս.Մ.-ին տրամադրվել է կեղծ տեղեկություններ պարունակող պաշտոնական փաստաթուղթ, ըստ որի՝ ընկերության կողմից ձեռք բերված՝ Գեղագիտության կենտրոնի շենքի զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում եւ կարող է օտարվել: Մինչդեռ, կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 7-ի որոշման համաձայն՝ նույն հասցեում գտնվող շենքն ընդգրկված է եղել Երեւան քաղաքի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում:

Բացի այդ, ըստ պայմանագրի՝ գույքը ձեռք բերած ընկերությունը պարտավորվել է մինչեւ 2006 թվականի ավարտը կատարել առնվազն 90 մլն դրամի ներդրում, որը չի կատարել, իսկ իրավասու պաշտոնատար անձանց կողմից տեւական ժամանակ որեւէ միջոց չի ձեռնարկվել գնորդին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա բռնագանձում կիրառելու ուղղությամբ:

Նկատի ունենալով, որ ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել է առերեւույթ հանցանքի դեպք՝ դատախազը հանցանքի մասին հաղորդում է ներկայացրել Հակակոռուպցիոն կոմիտե:

2023 թվականի դեկտեմբերի 20-ին Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը), 315-րդ հոդվածի 2-րդ մասով (պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, ինչպես նաեւ շենքերի եւ շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու, կանխարգելելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով միջոցներ չձեռնարկելը) եւ 314-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական կեղծիք):

Գլխավոր դատախազությունը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում միջոցներ է ձեռնարկում համայնքային սեփականություն հանդիսացող գույքը համայնքին վերադարձնելու նպատակով:

ԲՈՂՈՔՈՒՄ ԵՆ

«ԵՐԵՎԻ ՈՒԶՈՒՄ Է՝ ՍԵՎԱՆՆ ԷԼ ՀԱՆՁՆԻ»

Երեկ Գեղարքունիքի մարզի ձկնորսները կրկին բողոքի ակցիա էին իրականացնում՝ ուղղված կառավարության որոշման դեմ, ըստ որի՝ այս շրջանում արգելվում է Սեւանա լճից սիգի որսը:

Բողոքի ակցիայի մասնակից ձկնորսներից մեկն ասաց, որ նախկինների իշխանության օրոք ժողովուրդն ազատ ապրում էր, ներկայիս իշխանությունը եկավ եւ ժողովրդին դրեց «պռոբկի» մեջ:

«Ուժեղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր: Մարդիկ այլեւս այս ցավին չեն դիմանում, նախկինների ժամանակ կարողանում էինք աշխատել, հիմա չենք կարողանում: 30 տարի մարդիկ ազատ ապրել են, ազատ, անկախ Հայաստան էր, չէ՞»,- նշեց ձկնորսը: Ներկաներից մեկն էլ ասաց, որ պահանջում են, որպեսզի ոստիկանները բաց թողնեն բերման ենթարկված իրենց երեխաներին. նրանք անմեղ են:

«Չգիտեմ՝ քանի հոգու են ձերբակալել, 20 է, թե 26, բոլորն էլ անչափահաս են, էլի:

Կներեք, բայց ոստիկանությունն է նախապատրաստված եկել այստեղ, ոչ թե ժողովուրդը: Լոդկային են խփել, մարդիկ խեղվելուց են փրկվել, իսկ ջրային պարեկները փորձել են փախնել: Գյուղացիները հազիվ են հասել, սուզվողներին փրկել, ու վեճ է տեղի ունեցել: Լավ է, բախտները բերել է, երեխաներին ջրից հանել են»,- նշեց նա: Ձկնորսների խոսքով՝ կառավարությունը լճում ոչ ձուկ է աճեցրել, ոչ էլ դրա հետ առնչություն ունի. 40 տարի ձուկ են բռնել, ձուկ էլ շատ կա:

«Երեւի Նիկոլն ուզում է՝ Սեւանն էլ հանձնի, այդպես եմ պատկերացնում: Եթե այդպես չէ, ինչո՞ւ է ուզում ժողովրդին սովամահ անել»,- եզրափակեց ձկնորսներից մեկը: Հիշեցնենք, որ այսօր Քննչական կոմիտեն պաշտոնական հաղորդագրություն էր տարածել՝ նշելով, որ քրեական վարույթի շրջանակներում պարզվում են Գեղարքունիքի մարզում տասնյակ անձանց մասնակցությամբ տեղի ունեցած՝ առարկայի գործադրմամբ կողոպուտի, մի խումբ անձանց կողմից մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված, հարմարեցված առարկայի եւ միջոցի գործադրմամբ եւ այդպիսիք գործադրելու սպառնալիքով խուլիգանության, ինչպես նաեւ պաշտոնատար անձի օրինական ծառայողական գործունեությանը՝ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված եւ հարմարեցված առարկայի եւ միջոցի գործադրմամբ միջամտելու դեպքի հանգամանքները:

ԱՐԳԵԼԱՓԱԿՎԵԼ Է ՄԵՔԵՆԱՅՈՒՄ

Դեկտեմբերի 20-ին՝ ժամը 11:05-ին, Արարատի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Փոքր Վեդի գյուղի մոտակայքում տեղի է ունեցել ՃՏՊ, կա տուժած, անհրաժեշտ է փրկարարների օգնությունը. այս մասին տեղեկացրին ՆԳՆ ՓԾ-ից: Դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ: Պարզվել է, որ Տափերական գյուղի մոտակայքում «Զիլ» մակնիշի ավտոմեքենան (վարորդ՝ Ա. Ն.՝ ծնված 1969 թ.) կողաշրջվել է, վարորդն արգելափակվել է ավտոմեքենայում: Մինչ փրկարարների՝ կանչի վայր հասնելը քաղաքացին արգելափակումից դուրս է բերվել տեղի ուժերով եւ փրկարարների օգնությամբ մոտեցվել շտապօգնության ավտոմեքենային. տուժածը հոսպիտալացվել է բժշկական կենտրոն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 19-ից 20-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 48 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄՐՑԱՆԱԿԸ՝ 300.000 ԱՄՆ ԴՈԼԱՐ

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 80-ամյակի առթիվ կազմակերպված հանդիսավոր արարողության ժամանակ մի խումբ գիտնականների հանձնվել են մրցանակներ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ գիտության եւ կրթության ոլորտում ներդրած ավանդի համար ՀՀ վարչապետի հուշամեդալով պարգեւատրվեցին ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի ասիմետրիկ կատալիզի լաբորատորիայի վարիչ, քիմիական գիտությունների թեկնածու Աննա Մկրտչյանը եւ ԳԱԱ ինֆորմատիկայի ու ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրեն, տեխնիկական գիտությունների դոկտոր Հրաչյա Ասցատրյանը:

Հանդիսավոր պայմաններում տեղի ունեցավ նաեւ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան 2020 թվականի միջազգային գիտական մրցանակի շնորհումն արտասահմանցի երեք գիտնականներին:

Մասնավորապես՝ պրոֆեսոր Ալեքսանդր Սալայը (Ջոնս Հոփքինսի համալսարան, Բալթիմոր, ԱՄՆ) առաջադրվել էր Նոբելյան մրցանակի դափնեկիր Ադամ Ռիսի կողմից Տիեզերքում մութ նյութի՝ որպես չեզոք, թույլ փոխազդող մասնիկ լինելը ցուցադրող իր առաջնային աշխատանքի եւ տվյալների վրա հիմնված վիճակագրական տիեզերաբանության մեջ իր ներդրումների համար: Պրոֆեսոր Իզաբել Բարաֆը (Էքսետերի համալսարան, ՄԹ եւ Լիոնի CRAL/ENS, CNRS, Ֆրանսիա), առաջադրվել էր Էքսետերի համալսարանի (ՄԹ) կողմից Ցածր զանգվածով աստղերի, գորշ թզուկների եւ արտարեգակնային մոլորակների բնագավառում իր հիմնարար ներդրումների եւ աստղասեյսմաբանության եւ կոմպակտ կրկնակիների ոլորտում նորարարական գաղափարների համար: Պրոֆեսոր Ադամ Բարոուզը (Աստղաֆիզիկական գիտությունների բաժին, Փրինսթոնի համալսարան, ԱՄՆ) առաջադրվել էր Փրինսթոնի համալսարանի (ԱՄՆ) կողմից գորշ թզուկների եւ արտարեգակնային մոլորակների տեսություններում իր բեղմնավոր եւ առաջնային ներդրումների եւ գորշ թզուկների եւ արտարեգակնային մոլորակների հետազոտությունների առաջնագծում գիտնականների սերունդ աճեցնելու գործում նրա առաջատար դերի համար: Երեք դափնեկիրներն էլ մրցանակը ստացան հանդիսավոր պայմաններում:

Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակն աստղագիտության եւ աստղաֆիզիկայի եւ հարակից գիտությունների կարեւոր մրցանակներից մեկն է: Այն շնորհվում է որեւէ երկրի եւ ազգության ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ոլորտում նշանակալից ներդրում ունեցող ականավոր գիտնականներին: Մրցանակը շնորհվում է 2010 թվականից ի վեր՝ յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ: 2010-2016 թթ. այն սահմանվել է ՀՀ կառավարության կողմից որպես 500,000 ԱՄՆ դոլար: 2018թ.-ից սկսած՝ այն կազմում է 300, 000 ԱՄՆ դոլար:

«ԳԱԼԱՔՍԻ»

ՄԵԿ ՕՐ՝ ԾՆՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ

Հուզված են երեխաները, առավել հուզված են ծնողները. «Գալաքսի» ընկերությունների խմբի՝ երկու ամիս տեւած աշխատանքային ռրակտիկայի վերջին ներկայացումը հենց երեխաներինն է: Նրանք ամփոփում են իրենց ստացած գիտելիքներն ու ղատմում ապագա ղլանների մասին՝ նոր նախագծեր, նոր երազանքներ, ամեն ինչ առջեւում է: Ավարտական միջոցառմանը ներկա էին երեխաների մենթորները՝ ընկերությունների տնօրենները, ինչպես նաեւ երեխաների ծնողները, խմբի աշխատակիցները:

«Գալաքսի» ընկերությունների խումբը մշտապես խրախուսում է իր համայնքի անդամների եւ նրանց ընտանիքների մասնակցությունը սպորտային, մշակութային եւ սոցիալական նախագծերին, ինչը մեզ դարձնում է ավելի համախմբված եւ ուժեղ: Ուրախ ենք, որ այս նախաձեռնության շրջանակում առիթ ենք ունեցել հյուրընկալելու մեր համայնքի ամենաթանկ անդամներին՝ երեխաներին»,- ասել է «Գալաքսի» ընկերությունների խմբի համահիմնադիր եւ գլխավոր տնօրեն Արամ Խաչատրյանը՝ The Futures Business Internship-ի փակման պաշտոնական արարողության ժամանակ:

Բիզնեսը հնարավորությունների արվեստ է եւ հաշվարկների գիտություն. այն բացահայտելու համար «Գալաքսի» համայնքի բոլոր ընկերությունների աշխատակիցների երեխաները մեկ ամիս շարունակ տարբեր հանդիպումներ են ունեցել «Գալաքսի» բիզնես առաջնորդների հետ, այցելել են ընկերությունների հետնաբեմ, քննարկում ու թիմային աշխատանք են ունեցել: Նախաձեռնությանը ներգրավված են եղել 10-ից 14 տարեկան 28 երեխա, որոնք ունեցել են 7 հանդիպում: Նրանք հնարավորություն են ունեցել այցելելու «Գալաքսի» ընկերությունների խմբում հանդես եկող «Մեգաֆուդ», «Փոլ Հայաստան», «Թայմ», «Յուքոմ», «Երեւան մոլ» կազմակերպություններ, ինչպես նաեւ նախագծի կազմակերպիչ «ԱքսելՄոնդրիան եւ գործընկերներ» հեղինակության կառավարման ընկերություն, ինտերակտիվ հանդիպումներ ունենալ բիզնես առաջնորդների հետ, տալ իրենց հուզող հարցերն ու ստանալ պատասխաններ:

«Գալաքսի» ընկերությունների խմբի այս նախաձեռնությամբ հրաշալի եւ բացառիկ հնարավորություն է տրվել մեր համայնքի աշխատակիցների երեխաներին մեկ օր անցկացնել իրենց ծնողների աշխատավայրում եւ գործնականում ծանոթանալ նրանց անելիքներին: Հիմա արդեն հետահայացք գցելով՝ կարող ենք փաստել, որ նախագիծը ոչ միայն ոգեւորիչ էր մասնակիցների ծնողների համար, այլեւ մոտիվացնող երեխաների համար՝ հետագայում մասնագիտության ընտրության հարցում կողմնորոշվելու, հնարավոր դժվարությունները պատկերացնելու եւ դրանց հաղթահարման ուղիները բացահայտելու տեսանկյունից»,- ասել է «Գալաքսի» ընկերությունների խմբի մարդկային ռեսուրսների կառավարման տնօրեն Աստղիկ Սարգսյանը The Futures Business Internship-ի փակման պաշտոնական միջոցառման ընթացքում: Ապագա առաջնորդները The Futures Business Internship-ի փակման պաշտոնական արարողության ժամանակ ամփոփել են թիմային աշխատանքները՝ «Գալաքսի» ընկերությունների խմբում հանդես եկող ընկերությունների ղեկավարներին ներկայացնելով հանդիպումների առավել տպավորիչ դրվագները, իրենց բիզնես գաղափարները եւ դրանց զարգացման տեսլականները:

«Գալաքսի» ընկերությունների խումբը, հիմնադրված Արամ Խաչատրյանի, Գուրգեն Խաչատրյանի եւ Արտյոմ Խաչատրյանի կողմից, հայկական հոլդինգային ընկերություն է, որը ներկայացնում է 15 ընկերություն՝ 3 երկրում: Ընկերությունը ջանքեր ու միջոցներ է ուղղում Հայաստանում սոցիալական պատասխանատվության ծրագրերի իրականացմանը կրթության, սոցիալական զարգացման եւ արվեստի ոլորտներում Հայաստանում մտքի առաջնորդության եւ մտավոր կապիտալի զարգացման համար: Միայն վերջին տարիներին «Գալաքսի»-ն իրականացրել է 64 մասշտաբային ԿՍՊ նախագծեր, որի շահառուներ են դարձել 10,000-ից ավելի մարդիկ:

«ՏՈՍՊԱ»

ԿԱՄԵՑՐԵԼ ԵՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը դեկտեմբերի 20-ին գումարել է նիստ, օրակարգում՝ ««Տոսպա» ռադիոընկերության խմբագրություն» ՓԲ ընկերության նկատմամբ վարչական ակտերի ընդունման վերաբերյալ հարցերը (երկու վարչական վարույթ): «Ժողովուրդ» օրաթերթն այս մասին տեղեկացավ Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովից:

«Նշվել է, որ հանձնաժողովը Լսողական մեդիածառայություն մատուցող ««Տոսպա» ռադիոընկերության խմբագրություն» ՓԲ ընկերության կողմից հեռարձակվող «Սպուտնիկ Արմենիա» լսողական ծրագրի ձայնագրության մշտադիտարկման արդյունքում արձանագրել է առաջին վարչական վարույթի դեպքում օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի, իսկ երկրորդի դեպքում՝ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ կետերի պահանջների խախտման հատկանիշներ:

Հանձնաժողովը Լսողական ծրագրեր հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթներ՝ հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից հեռարձակողի գործունեության մշտադիտարկման արդյունքների հիման վրա կազմված մշտադիտարկման իրականացման արձանագրությունները:

Ըստ կազմված արձանագրության՝ ընկերության կողմից հեռարձակվող «Սպուտնիկ Արմենիա» լսողական ծրագրի «Ուրբաթը՝ Տիգրան Քեռսայանի հետ» հաղորդման 2023 թվականի նոյեմբերի 17-ի եթերի ընթացքում հաղորդման հեղինակն ու վարողը ծաղրական եւ նսեմացուցիչ ձեւակերպումներով են անդրադարձել Հայաստանի Հանրապետությանն ու ժողովրդին՝ տալով գնահատականներ, որի բարոյական իրավունքն օտարերկրյա քաղաքացի հանդիսացող քաղաքական մեկնաբանն ու հաղորդավարը չունի: Արձանագրվել է նաեւ, որ հաղորդման ընթացքում հնչեցվել է օրենսդրությամբ արգելված արարքների կոչերի տարածում»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Ըստ աղբյուրի՝ներկայացվել են հարուցված երկրորդ վարչական վարույթի նյութերի: Նշվել է, որ հեռարձակողի կողմից «Աբովյան թայմ» հաղորդման հեռարձակման ընթացքում հնչեցվել են այնպիսի կարծիքներ եւ պնդումներ, որոնք ոչ միայն չեն համապատասխանում իրականությանը, այլեւ ՀՀ ժողովրդի շրջանում առերեւույթ խուճապ առաջանցող են: Արձանագրվել է նաեւ, որ հաղորդման ընթացքում հնչեցվել են ոչ հավաստի կամ հավաստիության բավարար չափ չունեցող, չստուգված աղբյուրներից սնվող տեղեկություններ:

«Առաջին վարչական վարույթի շրջանակներում հանձնաժողովը, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, որոշեց կիրառել վարչական տույժ՝ կասեցնել ««Տոսպա» ռադիոընկերության խմբագրություն» ՓԲ ընկերության լիցենզիայի գործողությունը 30 օր ժամկետով, իսկ երկրորդ վարչական վարույթի շրջանակում կիրառել օրենքի 58-րդ հոդվածի 18-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով»,- հայտնում են Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովից:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 13 պատահար. 19 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀՐԴԵՀ

ՊԱՀՊԱՆՎԵ՞Լ ԵՆ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Երեւանի Տիգրան Մեծ պողոտայում գտնվող տնտեսական իրերի խանութի հրդեհի հետեւանքով ծանր այրվածքներ է ստացել տնօրենը: Նա վերակենդանացման բաժանմունքում է:

Այրվածքաբանական ազգային կենտրոնի փոխտնօրեն Կարինե Բաբայանի խոսքով՝ գնահատվել է վիճակը ծայրահեղ ծանր, հիվանդը բուժվում է վերակենդանացման բաժանմունքում, բուժումը ընթանում է, ընթացքը կերեւա արդեն: «Այն, որ վիճակը ծայրահեղ ծանր է, վերակենդանացումը, կարծում եմ, ամեն ինչ ասում է», - հավելեց Բաբայանը:

Թե ինչն է եղել հրդեհի պատճառը, հայտնի չէ: Առայժմ միայն ենթադրություններ են: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկացմամբ՝ Սեփականատիրոջ եղբայրն ասաց՝ հնարավոր է տաքացուցիչն է եղել պատճառը. «Ձմեռ է, մի բան վառել են տաքանալու, բանի, կարող է դրանից է հրդեհվել: Կարող է, չգիտեմ ես»:

Տարածքը երեւանցիներին «Պարսկական խանութներ» անունով է հայտնի:

Հարեւան խանութում աշխատող ականատեսը պատմեց՝ ուժեղ պայթյուն են լսել ու դուրս եկել, տեսել՝ հրդեհ է, անմիջապես փորձել են մարել տնօրենի հագուստի կրակը: Ըստ նրա՝ խանութում այդ պահին հաճախորդներ չեն եղել. «Հաց էինք ուտում, էդ ընթացքում գմփոց դուրս էկավ, դուրս էկա, տեսա՝ արդեն խանութն է պայթել: Իրեն ենք հանգցրել էդ պահին, ուշքումիտքներս ինքն էր, էլի, չէինք կարող թողեինք իրեն, խանութը հանգցնեինք: Կանչեցինք շտապօգնություն, մեկ էլ հրշեջ ծառայությունը, ու էդքան բան, էլի: Կարեւորը ինքն է մեր համար էղել, էդ պահին ինքն է ուշքումիտքներս եղել: Թեթեւակի այրվել է, էլի, ձեռքը, մեկ էլ գլուխը իր: Ուղղակի էն պահին հասցրինք, որ մենք իրեն օգնեցինք, էդ այրված բաները սաղ վրից վերցրինք. շորերն էր կպել, մեկ էլ պլաստմասը գլխին էր ընկել»:

Ըստ Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության՝ մոտ 50 քմ տարածքում այրվել են տնտեսական իրեր: Խանութի առջեւում պահպանվել էին պլաստմասե ծաղկամաններ, աթոռներ, սեղանների մի մասը:

Արդյոք խանութում կրակմարիչ եղե՞լ է, ներսում պահպանվե՞լ են հակահրդեհային կանոնները. սեփականատիրոջ եղբայրը կարճ մեկնաբանությունից հետո հարցերի չպատասխանեց: Ասաց՝ հրդեհի ժամանակ տարածքում չի եղել:

Քրեական գործ այս պահին դեռ հարուցված չէ, իսկ հրդեհային անվտանգության տեսչական մարմնից հայտնեցին՝ իրենք հրդեհված խանութում ստուգումներ չեն անցկացրել, նվազ ռիսկային են համարել մասնավոր խանութը:

ՏԱՐԵՄՈՒՏ

ՁՄԵՌ ՊԱՊԻՑ ՄԻՆՉ ԲԱՍՏՈՒՐՄԱ, ՍՈՒՋՈՒԽ...

Հանրապետության հրապարակի լույսերից մինչ խորոված, բաստուրմա, սուջուխ... Մայրաքաղաքի տոնական «լուֆն» արդեն պատրաստ է: Փայլփլուն փողոցներ, գունավոր տաղավարներ, Ձմեռ պապեր ու էլֆեր... Երեկ ճոխ հրավառությամբ վառվեցին գլխավոր տոնածառի լույսերը: Այս ամենի համար Երեւանի քաղաքապետարանն ավելի քան 650 հազար դոլար է ծախսել:

Մայրաքաղաքի տոնական պատրաստություններին ու եռուզեռին զուգահեռ հրապարակվում են տարբեր ընկերությունների հետ կնքված պայմանագրերը: Ծախսերի առյուծի բաժինը լուսավորությանն ու կենտրոնական տոնածառի տեղադրմանն են ուղղվել, գումար է ծախսվել նաեւ վարչական շրջանների ձեւավորման համար:

Արդարացվա՞ծ են նման ծախսերը. քաղաքացիների կարծիքները տարբեր են:

«Մենք կորցրել ենք Արցախը, մեր ոսկե սերունդը. ոչ թե չարժեր, այլ ընդհանրապես ամոթ է», - ասաց քաղաքացիներից մեկը:

«Հո ամեն անգամ չէ, որ մարդիկ իրենց տխուր պետք է պահեն, դրա համար զվարճալի բաներ էլ պիտի լինեն», - նշեց մեկ այլ քաղաքացի:

Այս ծախսերի նպատակահարմարությունից խոսելով՝ անցած ամիս փոխքաղաքապետ Սուրեն Գրիգորյանը, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, ասել էր, թե այս ամենն առաջին հերթին երեխաների համար են անում:

«Հիմա են այդ մարդիկ իրենց մանկությունն ապրում, ու պետք է այդ մանկությունը լինի վառ. միայն երեխաները չէ, մենք բոլորս դրա կարիքն ունենք, որովհետեւ շարունակաբար ծանր տրամադրության, կորուստների, զրկանքների, որը մեր հանրությունը կրում է, պետք է նաեւ այդ հանրության կյանքում լինեն վառ կետեր», - ասել է Գրիգորյանը:

Երեւանցիների վճարած հարկերով վարչական շրջաններում ռեստորանային խնջույքներն է՞լ են երեխաների համար... Ավելի քան 3 միլիոն դրամով Նոր Նորքի ընդարձակ, մոդեռն ոճի դահլիճ ունեցող բարձրակարգ ռեստորաններից մեկում, առնվազն 200 անձի համար հյուրասիրություն է կազմակերպվելու: Քաղաքապետարանը ճաշացանկն էլ է հրապարակել. սեղանին պետք է լինի բաստուրմա, սուջուխ, Ստեղյադ ձկան, խոզի, հորթի խորոված, 5 տեսակի պանիր եւ այլն.. Կենացները խմելու են բարձրակարգ՝ առնվազն 10 տարվա հնեցման կոնյակով, օղի ու գինի էլ կլինի: Երեկոյի ընթացքում հանդիսավար՝ թամադա կաշխատի, պարահրապարակն էլ կթեժացնի դիջեյը: Քանաքեռ -Զեյթունում ավելի համեստ են նշելու. 300 հյուրերը կբավարարվեն խոզի խորոված, տարբեր աղցաններով ու ժուլիենով: Հնեցված կոնյակի մասին պայմանագրի մեջ չի նշվում, բայց փոխարենը Քանաքեռում կենդանի երաժշտություն կլսեն:

Քաղաքացիներից մեկը հաջորդ տարվա մենյուի համար խորհուրդներ տվեց. «Ինձ թվում է՝ տասը տարվա կոնյակը քիչ է, պետք է առնվազն լինի ֆրանսիական կոնյակ՝ առնվազն 100 տարվա կամ ավելի լավ է 200 տարվա, քանի որ մեր քաղաքապետարանն արժանի է միայն նման կոնյակների, ու անպայման ս– խավիար պետք է լինի՝ տարբեր տեսակի... ու շամպայն՝ անպայման Ֆրանսիայից՝ Շամպայն ռեգիոնից»:

Մարդիկ հիմնականում դժգոհում էին այս գնումներից: Ոմանց, այդուհանդերձ, ո՛չ քաղաքի ճոխ տեսքի համար ծախսված միլիոններ են հետաքրքրում, ո՛չ էլ իրենց իսկ վճարած հարկերով գցվող սեղաններն ու տասը տարեկան կոնյակները:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՍՊԱՌՆԱՑԵԼ ԵՆ

ՁԿՆՈՐՄՆԵՐԸ՝ ՕՐԵՆՔԻ ԴԵՄ

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի հանձնարարությամբ՝ Պաշտպանի ներկայացուցիչներն այց են իրականացրել ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ձերբակալվածներին պահելու վայր՝ Գեղարքունիքի մարզի Նորատուս բնակավայրում ձերբակալված անձանց տեսակցելու նպատակով:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ տեղի կունենան առանձնազրույցներ ձերբակալված անձանց հետ, կուսումնասիրվեն նրանց ձերբակալելու հիմքերն ու իրավունքների ապահովման վիճակը, ինչպես նաեւ այդ առնչությամբ իրավապահ մարմինների կազմած փաստաթղթերը:

Ավելի վաղ Քննչական կոմիտեն հայտնել է, որ Գեղարքունիքի մարզի ջրային պարեկային ծառայության աշխատակիցները «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ծառայողների հետ 2 նավակով ծառայություն են իրականացել Սեւանա լճի Նորատուս բնակավայրի հատվածում: Այդտեղ նրանց են մոտեցել մոտ 200 ձկնորսական նավակներ: Դրանցում գտնվող դիմակավորված բազմաթիվ անձինք պարեկների եւ «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի նավերի վրա գտնվող անձնակազմի հասցեին հնչեցրել են հայհոյանքներ, սպառնացել են հրկիզել նրանց եւ նավերը, նրանց ուղղությամբ նետել են բենզինով լցված շշեր, փայտեր: Ոմանց հաջողվել է բարձրանալ «Սեւան ազգային պարկ»-ին պատկանող նավի վրա եւ վիճաբանել նավի վրա գտնվող աշխատակիցների հետ, ձեռքերով, ոտքերով, տարբեր առարկաներով հարվածել աշխատակիցներին, որոնցից մի քանիսը, նախնական տվյալներով, ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

Նաեւ նրանցից մեկը դանակով կտրել է «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ին պատկանող նավի հետնամասից կապված՝ նավակին պահող պարանը եւ նավակը տարել: Պարեկային ծառայողների կողմից մոտ 2 կմ հետապնդվելուց հետո ձկնորսները հեռացել են:

Ոստիկանության ծառայողների կողմից իրականացված հատուկ գործողության արդյունքում հանցավոր արարքներ կատարելու մեջ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածանքի հիմքով ձերբակալվել եւ վարույթն իրականացնող մարմին է ներկայացվել թվով 26 անձ: Որոշումներ են կայացվել վերջիններիս ձերբակալելու վերաբերյալ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

Ի ՆՊԱՍՏ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԶԱԼՅԲՈՒՐԳՈՒՄ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն ընդունել է ավստրիացի հայագետ Յասմին Դում-Թրագուտին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ժաննա Անդրեասյանը ողջունել է Յասմին Դում-Թրագուտին եւ կարեւորել վերջինիս գործունեությունը՝ ուղղված հայագիտության զարգացմանը: «Հայագիտությունը մեր կարեւոր ուղղություններից մեկն է, որի զարգացման նպատակով նախաձեռնել ենք ռազմավարության մշակման գործընթաց: Պատրաստ ենք քննարկել հայագիտությանն աջակցելու բոլոր հնարավորությունները»,- ասել է նախարարը:

Նա տեղեկացրել է, որ 2012 թվականից ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվում է օտարերկրյա պետություններում հայերենի եւ հայագիտական առարկաների դասավանդման ծրագիր: 2023 թվականին այն իրականացվել է 13 պետությունների 15 կառույցներում:

«Յասմին Դում-Թրագուտը շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ ներկայացրել Զալցբուրգի համալսարանի հայագիտության բաժնի գործունեությունը, առաջիկա ծրագրերը, որոնք վերաբերում են նաեւ Լեռնային Ղարաբաղի տարածքում հայկական մշակութային ժառանգությանը:

Հայագետը տեղեկացրել է՝ նախատեսվում է գալիք տարին նշանավորել որպես հայկական մշակութային ժառանգության տարի, որի շրջանակում կկազմակերպվեն դասախոսություններ, միջոցառումներ, ցուցահանդեսներ: Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել նաեւ «Մատենադարան» գիտահետազոտական ինստիտուտի հետ՝ ցուցահանդեսով ներկայացնելու Սյունիքում իրականացված հետազոտության արդյունքները, Լեռնային Ղարաբաղի խաչքարերի լուսանկարները»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Նշվում է, որ հանդիպմանը քննարկվել են հայագիտությունը որպես գիտաճյուղ ավելի գրավիչ եւ ճանաչելի դարձնելու հնարավորությունը, կադրերի համակարգում գործուղման մեխանիզմներ կամ փոխանակման ծրագիր մշակելու հեռանկարները:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է, որ 2024 թվականին նշվելու է Զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին Հաագայի կոնվենցիայի 70-ամյակը, որի շրջանակում աշխատանքներ են տարվում օրակարգում ընդգրկելու հայկական մշակույթը՝ ներառյալ Լեռնային Ղարաբաղի մշակութային ժառանգության պահպանությունը: Նախարարն այս համատեքստում կարեւորել է նաեւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ շարունակական աշխատանքները տարածաշրջանում փաստահավաք առաքելություն ուղարկելու նպատակով: Կարեւորվել է նաեւ ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությունը օրակարգային դարձնելու հարցը:

Հանդիպմանը քննարկվել են նաեւ հայագիտության զարգացմանն առնչվող մի շարք այլ հարցեր:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԲԱՐՁՐԱՑՐԵԼ ԵՆՔ ՆՇԱՁՈՂԸ

Հայաստանի մարմնամարզության տարբեր տարիքային հավաքականները 2023 թվականին նվաճել են ընդհանուր 36 մեդալ:

Լրագրողների հետ հանդիպման ժամանակ այս մասին հայտնեց Հայաստանի մարմնամարզության հավաքականի գլխավոր մարզիչ Հակոբ Սերոբյանը:

«Անցնող տարին մեզ համար հաջող էր: Չեմ ասի՝ շատ հաջող, քանի որ սպասելիքներ ունեինք նաեւ աշխարհի առաջնությունից, եւ մենք պետք է մեդալ նվաճեինք նաեւ այնտեղ: Այնքան ենք բարձրացրել նշաձողը, որ յուրաքանչյուր մրցաշարից ոսկե մեդալ ենք ակնկալում: Այս տարի բացառիկ հաջող էր երիտասարդների աշխարհի առաջնությունը: Համլետի երկրորդ ոսկե մեդալը շատ լավ արդյունք էր, հրաշալի էր Մամիկոնի՝ նժույգթափերում արծաթե մեդալը: Բացահայտում էր թիմային 4-րդ հորիզոնականը»,-ասաց Սերոբյանը:

Վերջինիս խոսքով՝ 2023 թվականին կայացած մարմնամարզության աշխարհի գավաթի խաղարկությունները շատ հաջող ստացվեցին: 2024 թվականի աշխարհի գավաթի խաղարկությունները կլինեն վարկանիշային, եւ յուրաքանչյուր գործիքի վրա կխաղարկվի երկու օլիմպիական վարկանիշ:

«Եվրոպայի 2023 թվականի առաջնությունում Արթուր Դավթյանը պարզապես փայլեց, եւ ամեն մարզաձեւում չէ, որ յուրաքանչյուր մարզիկ կարող է երկու մեդալ նվաճել, ինչպես Արթուրը՝ ոսկե եւ բրոնզե: Եվրոպայի առաջնության արծաթե մեդալակիր դարձավ Վահագն Դավթյանը: Մենք ունեցանք առաջին, երկրորդ եւ երրորդ տեղեր Եվրոպայի առաջնությունում: Ընդհանուր առմամբ, այս տարի մարմնամարզիկները նվաճել են 36 մեդալ՝ 11 ոսկի, 8 արծաթ, 11 բրոնզ»,- ասաց հավաքականի գլխավոր մարզիչը:

Սերոբյանն ընդգծեց, որ Փարիզի օլիմպիական խաղերի համար դեռեւս մասնակցության եւս մեկ հույս կա: Եվս մեծ վարկանիշ կխաղարկվի Եվրոպայի առաջնությունում:

2023 թվականի կարեւոր իրադարձություններից մեկն էր նաեւ Եվրոպական ֆեդերացիայի կողմից 2027 թվականի ԵԱ-ն Հայաստանում անցկացնելու որոշումը:

Հայաստանի մարմնամարզության հավաքականի մարզիչ Հայկ Նազարյանի խոսքով՝ նվաճած մեդալը կատարած աշխատանքի մասին է խոսում:

«Մենք մեկ ընտանիք ենք եւ շատ միասնական: Աշխատում ենք միասին, իսկ մեր տղաները ջանք չեն խնայում լավ արդյունքի հասնելու համար»,-ասաց Նազարյանը:

Վերջինիս ընդգծեց՝ 2023 թվականի լավագույն արդյունքներից մեկը պատանեկան օլիմպիական փառատոնում մարմնամարզության հավաքականի թիմային բրոնզե մեդալն էր, որը բացառիկ արդյունք է պատանեկան տարիքային խմբում:

ԿՈՐՈՒՍՏ

ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ՁԵՌԱԳԻՐ՝ ԵՐԳԱՐՎԵՍՏՈՒՄ

Կոնդի «Սուրբ Հովհաննես Մկրտիչ» եկեղեցում դեկտեմբերի 19-ին տեղի է ունեցել երգիչ Արա Մարտիրոսյանի հոգեհանգիստը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ սիրված երգչի հոգեհանգստի արարողությանը ներկա էին ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը, քաղաքական, մշակութային գործիչներ, արվեստակից ընկերներ ու նրա երգարվեստի երկրպագուներ: Երաժիշտ Կամո Սեյրանյանը Արա Մարտիրոսյանին բնութագրեց որպես լավ ընկեր ու երգիչ, որ իր տեմբրով յուրահատուկ ձեռագիր ունի երգարվեստում:

«Մեծ հումորով, ճանապարհի լավ ընկեր էր: Բոլորիս ցավակցում եմ, մեծ երգիչ կորցրեցինք՝ բոլորիս կողմից շատ սիրված Արա Մարտիրոսյանին»,-ասաց նա: Դերասան Գարիկ Պապոյանի խոսքով՝ ոչ մի կերպ չի ստացվում Արա Մարտիրոսյանի մասին խոսել անցյալով:

«Բայց ես գիտեմ, որ Արայի կորուստը միայն իր ընկերների եւ ընտանիքի կորուստը չէ. չգիտեմ մի մարդ , ով կարեւորում է հայկական երաժշտությունն ու չի կարեւորում Արայի պես երգիչների ձայնը: Կարծում եմ՝ նա մեծ կորուստ է որպես երգիչ: Համոզված եմ, որ նրա թողած երաժշտությունը երբեւէ չի ունենալու կարճ կյանքի բնութագիր, ինչպես հենց Արայի ապրած կյանքն էր»,-հավելեց Պապոյանը:

Հայաստանի վաստակավոր արտիստ, երգիչ Արամեն (Արամ Եղիազարյան) պատմեց, որ Արա Մարտիրոսյանի հետ ծանոթացել է 16-17 տարի առաջ, եւ նա այնքան լի էր էներգիայով ու կենսուրախ, որ այդ տարիները միայն պայծառ հիշողություններ են պարունակում:

«Նրան ոչ ոքի հետ շփոթել հնարավոր չէ եւ՛ որպես մարդ, եւ՛ որպես երգիչ, որովհետեւ ուներ բացարձակ տաղանդ: Բացի այն, որ ինքը փայլուն երգիչ էր, նաեւ շատ լավ երաժիշտ էր: Ես վստահ եմ՝ հարյուր հազարավոր մարդիկ այսօր ցավ են ապրում, որովհետեւ կյանքից հեռացավ տաղանդավոր մարդ, որը դեռ շատ կարող էր եւ՛ երգել, եւ՛ իր ներկայությունը նվիրել ընկերներին, երկրպագուներին, որի համար ես շատ ցավում եմ»,-ասաց Արամեն:

Դեկտեմբերի 15-ին 46 տարեկանում կյանքից հեռացել է երգիչ Արա Մարտիրոսյանը:

Ինչպես հայտնել էին «Նաիրի» բժշկական կենտրոնից, նա հիվանդանոց էր տեղափոխվել սուր սիրտ-անոթային եւ շնչառական անբավարարությամբ, ծայրահեղ ծանր վիճակում:

Ցուցաբերվել է համապատասխան օգնություն, ժամեր շարունակ բժիշկները պայքարել են արտիստի կյանքը փրկելու համար, սակայն գրանցվել է սրտի կանգ:

Ըստ ԲԿ-ի հանրային կապերի բաժնի՝ Արա Մարտիրոսյանն ունեցել է ուղեկցվող հիվանդություններ:

● *Հունվարի 7-ին Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի կունենա Հովհաննես Դավթյանի նոր՝ ամանորյա սթենդափ շոուն՝ The Boing Orchestra-ի մասնակցությամբ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ ընդգրկվել որակավորված ներքին աուդիտորների ցանկում:

Հարութ Ստեփանյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում ընդգրկվելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն կարող են դիմում ներկայացնել այն անձինք, որոնք ունեն Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի միջազգայնորեն ճանաչված հետեւյալ որակավորումներից առնվազն մեկը՝

1) ներքին աուդիտորների միջազգային ինստիտուտի կողմից իր կրթական ստանդարտներին համապատասխան անցկացված քննությունների արդյունքում տրված ներքին աուդիտորի որակավորումը (Certified Internal Audit- CIA) կամ հանրային հատվածի աուդիտորի որակավորումը (Certified Government Auditing Professional - CGAP),

2) որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (ACCA) կողմից անցկացված առնվազն բազային (ֆունդամենտալ) 9 քննության (F1-F9) արդյունքում տրված հաշվապահ-աուդիտորի որակավորումը,

3) հանրային ֆինանսների եւ հաշվապահության արտոնագրված ինստիտուտի (Chartered Institute of Public Finance Accountancy: CIPFA) կողմից տրված որակավորումը,

4) որակավորված հանրային հաշվապահների ամերիկյան ինստիտուտի (American Institute of Certified Public Accountants) կողմից տրված հանրային հաշվապահի որակավորումը (CPA):

Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի այլ կառույցների կողմից տրված հետեւյալ որակավորումներից առնվազն մեկը՝

1) «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն տրված աուդիտորի որակավորումը,

2) Հայաստանի Հանրապետության հաշվապահների եւ աուդիտորների ասոցիացիայի (ՀՀԱԱ) կողմից տրված աուդիտորի որակավորումը:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ դիմումին կից պետք է ներկայացնել՝

- անձնագրի պատճենը,
- համապատասխան որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը,
- հայտարարություն:

էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ի՞նչ է Կենտրոնական բանկի անկախությունը, եւ ինչո՞ւ է այն չափվում:

Աշոտ Գեւորգյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գների կայունության ապահովման համար ինստիտուցիոնալ կարեւոր նախապայման է ԿԲ-ների անկախությունը: Ուսումնասիրությունները վկայում են, որ ԿԲ-ների անկախությունը (գործառնական) նպաստում է իրականացվող դրամավարկային քաղաքականության վարկունակությանը՝ մեծացնելով շուկայի արձագանքը ԿԲ ազդակներին: Էմպիրիկ վերլուծությունները բացահայտել են ԿԲ-ի անկախության եւ ցածր գնաճի միջեւ ուղղակի կապ:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Դրամավարկային քաղաքականության իրականացման առումով տարբերակում են ԿԲ-ի անկախության երեք աստիճան՝

- նպատակի սահմանման,
- նպատակային ցուցանիշի սահմանման,
- գործառնական:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղում կրքերը չեն հանդարտվում. ջրային պարեկների եւ ձկնագողերի հակամարտությունը շարունակվում է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 8 - 13 - 1 + 3
Կոտայքի լեռներ	- 8 - 12 - 1 + 2
Կոտայքի նախալեռներ	- 5 - 8 + 3 + 4
Գեղարքունիք	- 8 - 13 + 1 + 5
Լոռի	- 4 - 7 + 8 + 12
Տավուշ	- 3 + 1 +12+ 15
Արագածոտնի լեռներ	- 9 - 12 - 1 + 1
Արագածոտնի նախալեռներ	- 4 - 7 + 1 + 5

Արարատ	- 4 - 6 + 4 + 7
Արմավիր	- 6 - 9 + 4 + 6
Վայոց ձորի լեռներ	- 10 -13 - 1 - 3
Վայոց ձորի նախալեռներ	- 4 - 6 + 5 + 7
Սյունիքի հովիտներ	- 5 - 8 + 4 + 6
Սյունիքի նախալեռներ	- 5 - 7 + 2 + 5
ԼՂՀ	- 4 + 2 0 + 2
Երեւան	- 0 - 2 + 3 + 5

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.12.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*